ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 10-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ N 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Լուսառատ համայնքի ավագանու N 3 նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1.Լուսառատի համայնքային 2020թ բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Ա. ԵՄԻՇՅԱՆ/

2.Համայնքի ավագանու 2020թ հունվարի 16-ի <<Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին>> թիվ 3 որոշման գործողությունը դադարեցնելու մասին:

/Զեկ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 11-Ա

ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2020Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային 2020թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

ֆոնդային բյուջեի ոռոգման ցանցի կառուցում 900422104241 հաշվի 04-02-04 գործառնական և տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից պակասեցնել 4.000,0 հազ. դրամ

այն ավելացնել

հանգիստ, մշակույթ, կրոն 900422104126 հաշվի 08-05-01-55 գործառնական և տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածին:

Ֆոնդային բյուջեն սահմանել 15532,8-հազ. դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 12-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի <<ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը նշեց, որ ավագանու 2020թ հունվարի 16-ի N 3 որոշմամբ հաստատվել է հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, ըստ որի համայնքի վարչական տարածքում գտնվող 0,64 հա համայնքային և 5,7578 հա պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային հողամասերի նպատակային նշանակությունը փոխվել է և դասվել բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 16.03.2020թթիվ 34/1.1/6430-20 գրությամբ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին հայտնել է, որ կատարված լրացուցիչ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ այդ նպատակային նշանակության փոփոխվող հողերը գտնվում են Արտաշատ քաղաքատեղիի պահպանման գոտու մեջ և առաջարկել է չեղարկել նախարարության 2019թ դեկտեմբերի 20-ի N 34/14-2/30225-19 գրությունը:

Հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 16.03.2020թ թիվ 34/1.1/6430-20 գրությունը հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվել է նպատակային նշանակությունը փոխելու մասին ընդունված համայնքի ավագանու վերոնշյալ որոշման գործողությունը դադարեցնել:

Արտահայտվեցին ավագանու անդամներ՝

1.Գասպար Առաքելյան.- Հողամասի նպատակային նշանակության փոփոխման համար համայնքի ղեկավարի կողմից նախապես ձեռնարկվել են համապատասխան միջոցներ : Հաշվի առնելով, որ հողամասերը համարվում են պատմամշակութային նշանակության, որի մի մասը՝ մոտ 5,7 հա պետական սեփականության հողամասեր են, իսկ մի մասը՝ 0.64 հա, համայնքային, ուստի համայնքապետարանը հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու համար լիազոր մարմնի դիրքորոշումն ունենալու նպատակով նախապես դիմել է Արարատի մարզպետին: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև հուշարձանների պահպանման մարզային գործակալության դրական եզրակացությունը ստանալուց հետո համայնքապետարանը կազմել է համապատասխան փաստաթղթերի փաթեթ և ներկայացրել մարզպետարան: Հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո այն հաստատվել է

ավագանու կողմից:
Հարկ եմ համարում նշել նաև, որ վիճահարույց տարածքը 70-80-ական թվականներին եղել է քարի հանք, որի աշխատանքները դադարեցվել են, քանի որ պարբերաբար պայթեցումներ կատարելիս երբեմն հարակից տարածքի բակելի տների պատուհանների ապակիներ էին կոտրվում:

2. Մանվել Հովհաննիսյան.- Գտնում եմ, որ ավագանին չպետք է դադարեցնի իր որոշման գործողությունը, քանի որ տվյալ տարածքը տարիներ շարունակ եղել է աղբանոց, որևէ հուշարձան այնտեղ չկա: Բացի այդ համայնքում կազմակերպվել է հանրային լսում , բնակչության մեջ մեծ ոգևորություն է առաջացել, քանի որ մեծ ներդրում պետք է կատարվի, աշխատատեղեր կստեղծվեն: Այն սահմանված կարգով ներկայացվել է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը և ստացել դրական եզրակացություն:
Ներդրողը հավատալով համայնքի ավագանու որոշմանը, հիմք ընդունելով հանրային լսման արդյունքները՝ նպատակային նշանակությունը փոխած տարածքին հարակից հողամասեր է գնել, որոնք հետագայում պետք է եկեղեցի տանելու ճանապարհ հանդիսանան: Ով պետք է փոխհատուցի ներդրողի կողմից կատարված ծախսերը:

3. Նարինե Մարտիրոսյան.- Լուսառատ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, ողջ համայնքը բարձր է գնահատում պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված ցանկացած քայլ: Մշակութային մեծ արժեք ունեցող հուշարձաններով լեցուն Լուսառատ համայնքի յուրաքանչյուր անդամի կողմից հուշարձանն ընկալվում է որպես ազգային արժեք, իսկ հուշարձանի պահպանումը՝ իր սուրբ գործը:
Մյուս կողմից սոցիալական ոչ այդքան լավ վիճակում գտնվող համայնք ունենալու պայմանում չպետք է անտեսի նաև համայնքի շահը, որտեղ ցանկացած ներդրում կնպաստի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:
Ելնելով համայնքում հուշարձանների պահպանման խնդրի կարևորությունից և ներդրումային ծրագրի իրականացման անհրաժեշտությունից առաջարկում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության առջև ստեղծելու արշավախումբ և սեղմ ժամկետում նպատակային նշանակությունը փոփոխված տարածքում իրականացնել պեղման աշխատանքներ: Այն կատարել ներդրողի միջոցների հաշվին:

Ելնելով վերոգրյալից համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

1.<<Հողամասի նպատակային նշանակության փոխման մասին>> համայնքի ավագանու 2020թ-ի հունվարի 16-ի թիվ 3 որոշման գործողությունը չդադարեցնել:
2. Խնդրել Արարատի մարզպետին նպատակային նշանակությունը փոփոխված տարածքում ներդրողի միջոցների հաշվին՝ պեղման աշխատանքներ կատարելու նպատակով հարցը ներկայացնել լիազոր մարմնի՝ ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության քննարկմանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՏՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**